համարեա ամէն գիշեր չէր դադարում ուղարկել իր տնում գտնուածից մեր բաժինը, եւ այնպէս ծածուկ, որ ոչ ոք չէր հասկանում:

Մարոյի հօրը կոչում էին Աւօ — նրա իսկական անունը ես չգիտէի: Նա ահագին բարձրութեամբ, մի վիթխարի տղամարդ էր, որ պարապում էր որսորդութիւնով: Աւօն մեր քաղաքի բնիկներից չէր, բայց մի քանի տարի առաջ, մի սաստիկ ձմեռնային եղանակում նա յայտնուեցաւ մեր քաղաքում, բոլորովին միայնակ, որպէս մի փախստական: Յետոյ փոքր առ փոքր կազմուեցաւ նրա ընտանիքը: Այդ ընտանիքը շատ մեծ չէր, — ինքը՝ որսորդը, իր միակ զաւակի՝ Մարոյի հետ — ահա բոլորը: Դրանց թւում գտնւում էին՝ մի մշտական ծառայ Մըհէ անունով, մի տնակալուչ կին, որին կոչում էին Խաթուն, եւ մի պատանի, որին կոչում էին Հասոյ: Այս վերջինը որսորդի որդեգիրն էր: Ովքե՞ր էին դրանք եւ որտեղի՞ց եկան — յայտնի չէր: Միայն մեր քաղաքում որսորդի մասին խօսւում էին շատ զարմանալի պատմութիւններ, իբր թէ նա տաճկական Հայաստանի արեւելեան կողմերիցն էր, թէ նա իր հայրենիքում մի նշանաւոր մարդ է եղել, թէ նա շատ կռիւներ է ունեցել քրդերի հետ եւ իր գլխի մազերի համբարքով մարդիկ է սպանել եւ այլն: Որքա՞ն ստոյգ էին այդ զրոյցները, մենք չգիտէինք, մեզ այսքանը միայն յայտնի էր, որ Աւօն մի բարի մարդ էր եւ մեր ամենալաւ դրացին, թէեւ ամէնքն ատում էին նրան եւ խորշում էին նրանից, որպէս մի սարսափելի եղեռնագործից:

Ճշմարիտ է, որ Աւօն իր միշտ լուռ, միշտ տխուր եւ ծածկամիտ բնաւորութեամբ մնաց ամէնի համար որպէս մի մթին հանելուկ: Նրա ճակատի վրայ դրած խոր սպին իր ահաւորութեամբ մի առանձին արտայայտութիւն էր տալիս դէմքի խոշոր, միեւնոյն ժամանակ աւազակային գծագրութեանը, որ յարուցանում էր նայողի մէջ ակամայ երկիւղ եւ կասկած: Այսոամենայնիւ, նա շատ բարեսիրտ մարդ էր. ես, Մարիամը եւ Մագթաղը ամենեւին չէինք վախենում նրանից: Երբ գնում էինք նրա տունը, նա առնում էր մեզ իր երկայն եւ ահագին ծնկների վրայ, օրօրում էր, եւ «պոչը կտրած մկան», «քոսոտ այծի» հեքիաթներն էր պատմում. մենք թուլանում էինք ծիծաղելուց: Մարօն չէր կարողանում համբերել, երբ տեսնում էր, որ իր հայրը Մարիամին նոյնքան սիրում էր, որքան Մագթաղին եւ ինձ: — «նա էլ քո քոյրն է», ասում էր հայրը եւ խրատում էր նրան նախանձոտ չլինել: Ամէն անգամ, երբ մենք գնում էինք որսորդի տունը, նա անսահման զուարճութիւն էր պարգեւում մեզ: Աւօն տալիս էր մեզ իր որսած թռչուններից, որը դեռ կենդանի էր մնացած. մենք կապում էինք նրա ոտը թելով եւ օրերով խաղ էինք անում նրա հետ: